ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(առարկա)

ԹԵՄԱ « ԶՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ»

Կազմեց՝ Նելլի Մերուժանի Թումանյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՁՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....5

1.1 Տարրական դասարաններում կիրառվող դիդակտիկ նյութերը, դրանց ներկայացվող մանկավարժահոգեբանական սկզբունքները.....5

1.2 Դիդակտիկ նյութերի գործածման պրակտիկան մայրենիի դասերին.....8

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՁՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ.....15

1.1 Հարցաթերթիկային ուսումնասիրության արդյունքների վերլուծություն.....15

1.2 Ձննականության կիրառման մեր փորձը.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակության առջև դրված է համակողմանի զարգացած անհատներ ունենալու պահանջը: Իսկ այդպիսի մարդիկ ձևավորվում են կրթության և դաստիարակության միջոցով, որի հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:

Հետազոտող, ստեղծագործ աշակերտ ունենալու համար մեծ դեր ունի ուսման կազմակերպման հիմնական ձևը՝ դասը, որի արդյունավետությամբ է պայմանավորված սովորողների ճանաչողական, ստեղծագործական ընդունակությունների, կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

21-րդ դարի կրթական գործընթացը արդյունավետ դարձնելու նպատակով գործադրվում է միջոցների համախումբ, որի մեջ են մտնում դասին գործածվող դիդակտիկ նյութերը: Այսօրվա ուսուցիչը ինքն է ստեղծում իր «զինանոցը», որը գործածելով ուսման գործունեության ընթացքում՝ նյութը սովորողին դարձնում է հետաքրքիր, հեշտ ընկալելի, մատչելի: Դրանց կիրառումը նպաստում է երևակայության, տրամաբանական մտածողության, խոսքի զարգացմանը:

Մեր ուսումնասիրության **օբյեկտը** տարրական դասարաններում մայրենիի դասի արդյունավետության բարձրացումն է զննական պարագաների՝ մեթոդապես ճիշտ և տեղին գործածման միջոցով, **առարկան՝** մայրենիի դասերին դիդակտիկ նյութերի կիրառման գործընթացն է՝ որպես դասի արդյունավետության միջոց:

Ուսումնասիրության նպատակով առաջ ենք քաշել հետևյալ **վարկածը՝** դիդակտիկ նյութերի կիրառումը նպաստում է դասի արդյունավետությանը, դրականորեն ազդում է սովորողների ուսման գործընթացի վրա:

Աշխատանքի **նպատակն է՝** դիդակտիկ նյութերը որպես ուսումնական գործընթացի արդյունավետության միջոց դիտարկումն ու ներկայացումը:

Ուսումնասիրության **խնդիրներն** են եղել՝

- ՈՒսումնասիրել մայրենիի դասերին կիրառվող դիդակտիկ նյութերին ներկայացվող պահանջները:

• Հիմնավորել դիդակտիկ նյութերի գործածման անհրաժեշտությունը, դերն ու նշանակությունը տարրական դպրոցում:

ՈՒսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք համագործակցային,

փոխներգործուն մեթոդներ՝ խոսքային՝ զրույց, պատմում, զննական՝ իլուստրացիա, դեմոնստրացիա, խմբային, զույգերով աշխատանք:

Ուսումնասիրությունները կատարվել են Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոցում: ՈՒսումնասիրությանը մասնակցել են 1-ից 4-րդ դասարանների աշակերտները:

Առաջին փուլում հավաքել ենք զննականության վերաբերյալ տեղեկատվական նյութեր, ուսումնասիրել ենք մեթոդամանկավարժական համապատասխան գրականություն:

Երկրորդ փուլում ստեղծել և կիրառել ենք զննական պարագաներ՝ մայրենիի դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Անցկացրել ենք հայտորոշիչ և ստուգողական աշխատանքներ, վերլուծել ենք արդյունքները: Եկել ենք այն համոզման, որ զննական պարագաների ճիշտ կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների կողմից ուսումնասիրվող գիտելիքների՝ ավելի ճիշտ և արագ ընկալմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Տեսականորեն հիմնավորվել է զննական պարագաների կիրառման արդյունավետությունը մայրենիի դասերին:

Հետազոտության գործնական նշանակությունը: Զննական պարագաներ ստեղծելու և օգտագործելու մեր փորձը կիրառվել է մեր գործընկերների վարած դասերի ժամանակ, այն օգտակար կլինի նաև դասվարների և դպրոցում պրակտիկա վարող ուսանողների համար:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, այն կազմում է համակարգչային շարվածքի 26 էջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԶՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Տարրական դասարաններում կիրառվող դիդակտիկ նյութերը, դրանց բովանդակությունը, պահանջները

Դեռևս նշանավոր մանկավարժ Յ. Ա. Կոմենսկին է սահմանել «Դիդակտիկայի ոսկե կանոնը». «Այն ամենը, ինչ որ միայն կարելի է ներկայացնել զգայարաններով ընկալելու համար, այն է՝ տեսանելին՝ տեսողությամբ, լսելին՝ լսողությամբ, հոտը՝ հոտառությամբ, համը՝ ճաշակելիքով, շոշափման ենթական՝ շոշափելիքի միջոցով ընկալելու համար: Եթե որևէ առարկա միանգամից կարելի է ընկալել մի քանի զգայարաններով, թող դրանք ընկալվեն մի քանի զգայարաններով:» [4, էջ 224]

Ուսուցման գործընթացում դասանյութը ավելի մատչելի, դյուրըմբռնելի դարձնելու համար գործածվում է դիդակտիկ նյութերի հարուստ զինանոց: Բացի նշված նպատակներից՝ դիդակտիկ նյութերը նպաստում են աշակերտների խոսքի, երևակայության, ճանաչողական ոլորտի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, որով կատարելագործվում և ակտիվանում է ուսման գործունեությունը: Հարկավոր է ընդգծել՝ յուրաքանչյուր դիդակտիկ պարագա ունի իր առաքելությունը. մեկ դիդակտիկ պարագան կարող է ծառայել տարբեր դասաժամերի, տարբեր նպատակներով, կարևորը արդյունավետ լինի ու աշակերտներին հասանելի: Սրանով է պայմանավորված դիդակտիկ պարագայի բովանդակությունը, թե որքանով բարձրացրեց աշակերտների ստեղծագործականությունը: Օրինակ՝ օգտագործելով պաստառ՝ կարելի է առաջադրել աշակերտներին գտնել առարկա ցույց տվող բառերը, միավանկ բառերը, նույն պաստառը կիրառել այսպես. նայելով պաստառում պատկերված գործողություններին, հերոսներին՝ հյուսել պատմություն:

Քննարկելով դիդակտիկ նյութերի վերաբերյալ ուսումնասիրություններ՝ մենք գտնում ենք, որ հիմնական պահանջները, որոնք ներկայացվում են դիդակտիկ նյութերին, սրանք են՝

- օգտագործվող նյութը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին,
- պետք է համապատասխանի նյութի բովանդակությանը,
- պետք է բխի տվյալ դասի նպատակներից ու խնդիրներից,
- ցուցադրելով պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել ցուցադրվող նյութի այն հատկանիշի վրա, որը կարևորվել է տվյալ դասի համար,
- հարկավոր է, որ դիդակտիկ նյութի ներկայացման սկզբում լինի ուսուցչի խոսքը, որից հետո ընդհատվի պատմվածքի կամ բնագրի շուրջ աշխատանքը, և ամբողջ դասարանը ներգրավվի աշխատանքի մեջ. հորդորել աշակերտներին՝ ուշադրությունը սևեռել պաստառի, նկարի, տեսանյութի վրա: Խոսքը չպետք է լինի երկարաշունչ, այն պետք է ունենա զուտ բացատրական բնույթ,
- զննական պարագաները չպետք է չափից շատ լինեն. վտանգ կա՝ աշակերտները կշեղվեն բուն նյութից,
- չպետք է ցուցադրվող պարագաները աչքին հասանելի դարձնել դասի սկզբից, այլ ցուցադրել այն ժամանակ, երբ անհրաժեշտ է, այլապես կա՛մ կշեղվի աշակերտների ուշադրությունը, կա՛մ դասը կկորցնի իր հետաքրքրությունը,
- ցուցադրվող առարկան, դիդակտիկ նյութը պետք է հստակ տեսանելի լինի բոլորին,
- ցանկալի է ստեղծել նաև պրոբլեմային իրադրություն՝ կապված ցուցադրվող նյութի հետ:

Մենք գիտենք, որ դիդակտիկ նյութերը տարբեր գործառույթներ ունեն ուսման գործընթացում ՝ կախված դասի նպատակից: Բայց համախմբել և ներկայացնում ենք այն հիմնական գործառույթները, որոնք իրականացնում է յուրաքանչյուր դիդակտիկ նյութ: Կազմված գծապատկերը ստորև՝

Գծապատկեր 1

Կատարելով հարցումներ ՀՀ տարբեր դպրոցների դասվարների հետ՝ ներկայացնում ենք այն հիմնական դիդակտիկ նյութերը, զննական պարագաները, որոնք կիրառվում են տարրական դասարաններում:

- Նկարներ, պաստառներ, նկարազարդումներ
- Մեծադիր տառեր, թվեր
- Անհատական կամ խմբային քարտեր, լոտոներ, խաչբառներ
- Խաղային, ինքնաշեն պարագաներ, փազլներ
- Նյութական զանազան առարկաներ
- Սահիկահանդեսներ
- Տեսանյութեր
- Տառադարան, թվադարան, «Հրաշք» պարկեր
- Խորանարդիկ՝ կետադրական նշանները ուսուցանելու և ճիշտ ուղղախոսության ձևավորման համար

Հաճախ դիդակտիկ նյութերն օգտագործվում են ուսուցման մեթոդների հետ համատեղ. կարելի է մեկ մեթոդի կիրառման ընթացքում ընտրել և օգտագործել մի քանի զննական պարագա:

1.2 Դիդակտիկ նյութերի կիրառումը մայրենիի դասերին

Հիմնականում զննական պարագաներն այնպես պետք է պատրաստել, որ նպաստեն աշակերտների բառապաշարի հարստացմանը և կապակցված խոսքի զարգացմանը: Հաշվի առնելով դպրոց նոր ընդունված աշակերտների տարիքային առանձնահատկությունները՝ նշված սահմաններում կարողություններ ու հմտություններ աշակերտները ձեռք են բերում հետաքրքիր, ակտիվ աշխատանքային գործունեությամբ: Տվյալ դեպքում դիդակտիկ նյութերը բնականաբար իրենց տեղն ունեն ուսման գործընթացը ինտերակտիվ ու արդյունավետ դարձնելու համար: Դիտազննական պարագաներ մայրենիի դասերին ամենից շատ կիրառում են առաջին դասարանում՝ գրաճանաչության շրջանում:

Նկարներ: Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաները նախաայբբենական շրջանի վերջում պետք է ՝

- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն) մասին և այդ եզրույթները գործածեն խոսքում,
- պարզագույն խորհրդանշանային զննականության միջոցով (գծապատկեր) կարողանան ներկայացնել նախադասությունը, բառը, վանկը, տառը,
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և գույների միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում,
- ունենան որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն կապակցված խոսքով ներկայացնելու (2-3 նախադասությամբ) կարողություն: [2, էջ 40]

Նախաայբբենական շրջանում կիրառվում են հետևյալ դիդակտիկ պարագաները՝

- նկար-բառեր. առարկայի նկարի ներքևում լինում է գծապատկեր:
- նկար-նախադասություններ, նկար-պատմություններ:

Աշակերտները նկար-բառերի, նկար-նախադասությունների, նկար-պատմությունների շնորհիվ կարողանում են արտահայտել համապատասխան բառեր՝ ենթարկելով հնչյունային վերլուծության, ձևակերպել նախադասություններ, ապա իմաստային կապով համադրելով իրար՝ ստեղծել պատմություններ՝ նկարին

համապատասխան կամ ըստ երևակայության: Այս համալիր գործողություններն իրականացվում են նախաայբբենական շրջանում՝ նախապատրաստական փուլ հանդիսանալով այբբենական շրջանի համար:

Այբբենական շրջանում՝ հնչյուն-տառի ուսուցման ժամանակ, ցուցադրվում է ուսումնասիրվող հնչյուն-տառի մեծադիր պատկերը, ապա համապատասխան հնչյունով սկսվող բառ-առարկայի նկարը: Հիմնականում նկարներում պատկերված են լինում առարկայական իմաստ արտահայտող այնպիսի բառեր, որոնց սկզբում լսվում է տվյալ հնչյունը: Նշված նկարով պատկերված առարկայի անվանումը մեկնաբառ է դառնում, որը վերլուծության է ենթարկվում:

Օգտագործվում են նաև նկարներ, որոնց անվանումների մեջ ուսումնասիրվող հնչյուն-տառը տեղադրված է լինում բառավերջում կամ բառամիջում:

Տպագիր տառի նկար: Ուսուցիչը նոր տառի ուսուցման ժամանակ ցույց է տալիս տպագիր տառը, որը աշակերտները համեմատում են նախորդ՝ արդեն սովորած տառերի հետ:

Ձեռագիր տառի նկար: Ձեռագիր տառը ցուցադրվում է աշակերտներին, որոնք այն համեմատում են տպագիր տառի հետ, այնուհետև պարզում են այն մասնիկները, որոնցով կազմված է տվյալ տառը, որոշում են մեծատառի և փոքրատառի նմանություններն ու տարբերությունները: Օգտագործելով այսպիսի զննական պարագաներ՝ կնպաստենք այբբենական շրջանի խնդիրների լուծմանը. ուսուցանել հայերենի բոլոր հնչյուն-տառերը, վայելուչ գրելու կանոնները, զարգացնել հոգեկան գործընթացները: Դասագրքերում օգտագործվում են որոշակի թեմատիկայով նկարներ, որոնց բովանդակությունն աշակերտները պատմում են, հաճախ նաև ստեղծագործելով: Նկարին նայելով՝ աշակերտները կատարում են կանխագուշակումներ բնագրի բովանդակության վերաբերյալ, այնուհետև պարզում՝ արդյոք համընկան իրենց կանխագուշակումները:

Գրավոր աշխատանքների՝ օրինակ՝ առարկայական թելադրության ժամանակ օգտագործվում են նկարներ, և աշակերտները գրում են ցուցադրվող նկարների անունները:

Նկարներ կիրառվում են նաև երկրորդ դասարանում՝ լեզվական վարժություններ կատարելիս. բառակազմական վարժությունների կատարման ժամանակ աշակերտները սովորում են բառախմբերի ընդհանրացնող անունները: Նման վարժությունների պահանջը կարելի է ձևակերպել այսպես. անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները և գրի՛ր դրանց ընդհանուր անվանումը: Ձևաբանական վարժությունների կատարման համար անհրաժեշտ է ունենալ մասնատված ձևույթներ, որոնք աշակերտները կմիացնեն իրար և կստանան բառեր, կարելի է մեկ այլ դիդակտիկ պարագա՝ պարկ օգտագործել: Խմբային կամ զույգերով աշխատանք կազմակերպել և օգտագործելով արմատ, ածանցներ՝ թղթից պատրաստված, ստեղծել բառեր: Այս եղանակով աշակերտները կընկալեն բառի ձևույթաբանական կառույցը:

Երկրորդ դասարանում գործողություն ցույց տվող բառերի մասին գաղափար կազմելու, այնուհետև երրորդ դասարանում բայն ուսումնասիրելու համար ցուցադրվում են մարդկանց կամ կենդանիների կատարած գործողությունները պատկերող նկարներ. աշակերտները պատմում են նկարի բովանդակությունն ու պատասխանում պատկերված գործողությունների վերաբերյալ ուսուցչի տված հարցերին, կազմում նախադասություններ: Նույն աշխատանքը կարելի է կատարել՝ ընդգծելով կազմած նախադասության գլխավոր և երկրորդական անդամները:

նկար 1

Ի՞նչ է անում աղջիկը:

նկար 2

Ի՞նչ է անում տղան:

Ջ. Գյուլամիրյանը երրորդ դասարանում բայի թվի ուսուցման մասին նշում է. «Նկար-առարկաների կամ պարզապես առարկաների օգնությամբ երեխաները գաղափար կկազմեն գոյական անվան և բայի՝ թվային համաձայնության մասին:

Օրինակ՝ ուսուցիչն աշակերտներին ցուցադրում է նկարներ, որոնցից մեկի վրա պատկերված է մեկ առարկա (անձ), իսկ մյուսի վրա՝ մի քանի առարկաներ ՝ պահանջելով դրանց շուրջ կազմել ընդամենը երկու բառից կազմված նախադասություն: Նախադասությունները գրելով համապատասխան նկարների տակ՝ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին համեմատել այդ նախադասությունների բայերը և որոշել, թե քանի առարկայի (անձի) կատարած գործողություն է ցույց տալիս դրանցից յուրաքանչյուրը»: [4, էջ 241];

Տառադարան. հայերենի այբուբենում եղած տառերի քանակին համապատասխան գրպանիկներով այբուբեն է, որը, բացի տառերից, ունի նաև կետադրական նշանների համար նախատեսված գրպանիկներ. նրա մեջ դրվում են գրպանին համապատասխան տառերի քարտերը, որոնց օգնությամբ աշակերտը կազմում է տառակապակցություններ, այնուհետև բառեր, որտեղ տվյալ հնչյունը լսվում է բառասկզբում, բառավերջում և բառամիջում: Տառադարանն օգտագործվում է առաջին դասարանում՝ գրաճանաչության այբբենական շրջանում:

Պաստառներ: Պաստառը համառոտ տեքստով, նկարներով, նկարազարդումներով մի պատկեր է, որը ունի որոշակի նպատակ և լուծում է կրթական ու դաստիարակչական խնդիրներ: Տարրական դպրոցում հաճախ է օգտագործվում այս դիդակտիկ նյութը միջոցառումների, հանդեսների ժամանակ, պաստառներ կարելի է տեսնել հենց դպրոցի միջանցքների պատերին: Պաստառների գունագեղությունն ու գեղագիտական ձևավորումը ակտիվացնում են աշակերտներին, աշխուժացնու�դասարանում տիրող մթնոլորտը, թոթափում հոգնածությունը և ուղղորդում դեպի գիտելիք որոնելու ճանապարհը: Առաջին դասարանում օգտագործվող պաստառի մի օրինակ է սա. պատրաստում ենք պաստառներ, որտեղ պատկերված են լինում տարվա չորս եղանակները ՝ վաղ գարուն, ուշ գարուն, ամառ, վաղ աշուն, ուշ աշուն, ձմեռ: Պաստառում դեպքերն ու գործողությունները պետք է պատկերված լինեն այնպես, որ աշակերտին տեսանելի լինի: Սրա կիրառումը դասերին նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը:

Քարտեր: Քարտային աշխատանքն իրենից ներկայացնում է առաջադրանք-խնդիր, որը գրված է քարտերի վրա, պահանջվում է լուծել առաջադրանքը կա՛մ ինքնուրույն, կա՛մ խմբային, կա՛մ զույգերով: Ուսուցիչն ինքն է որոշում, այն լինի անհատական, թե խմբային: Քարտային աշխատանքը թույլ է տալիս, որ սովորողը լինի ինքնուրույն, ստեղծագործ, կարելի է ասել ստեղծում է պրոբլեմային իրադրություն, որը հաղթահարելով՝ աշակերտը կնախապատրաստվի նոր նյութի հաղորդմանը կամ կամրապնդի նախորդ թեմայի ուսուցման ժամանակ ստացած գիտելիքները, դրանք կդարձնի կարողություն, որն անընդհատ կրկնություն կատարելու եղանակով կդառնա հմտություն: Քարտեր կարելի է օգտագործել տարրական դպրոցի բոլոր դասարաններում, բայց ավելի հաճախ կիրառվում է երրորդ և չորրորդ դասարաններում: Ներկայացնենք քարտային աշխատանքի մի տարբերակ. ուղղագրական արժեք ունեցող բառեր պատկերող նկար-քարտեր ենք բաժանում աշակերտներին, նրանք իրենց տետրերում գրում են այդ առարկայի անվանումը և փոխանցում ուրիշներին: Այդպես ստուգվում է նրանց՝ ուղղագրության կանոնների իմացությունը, քարտերի առատությունից ելնելով՝ կարող է յուրաքանչյուրը գրել մեկ տասնյակից ավել բառ: Դասն անցնում է հետաքրքիր, աշխույժ մթնոլորտում և, իհարկե, ուսուցիչը հասնում է իր նպատակին:

Սահիկահանդես: Այս դիտազննական պարագան բխում է զննականության իլյուստրացիայի մեթոդից, որի խնդիրն է ուսուցանվող թեմայի, առաջադրանքի կամ այլ ուսումնական նյութի հաղորդման ժամանակ օգտագործել դիտազննական պարագաներ, որոնք ցուցադրվում են և բացատրվում է թեմայի և դրանց կապը: Այս վերլուծական և ցուցադրման երևույթը կոչվում է իլյուստրացիա: Սահիկահանդեսները պատրաստում է ուսուցիչը՝ կախված դասի նպատակներից: Այն ժամանակակից տեխնիկական միջոցների բաղկացուցիչ մասն է, որը կարելի է օգտագործել տարրական դպրոցի տարբեր դասարաններում: Սահիկահանդես պատրաստելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի հանգամանք՝

- Ոչ բոլոր դպրոցներում կան համապատասխան տեխնիկական միջոցներ, այսինքն անհրաժեշտության դեպքում այդ հարցերը հոգում է ուսուցիչը:

• Սահիկահանդես պատրաստելու համար ուսուցիչը պետք է տիրապետի Microsoft PowerPoint ծրագրին:

Սահիկանդեսին ներկայացվում է մի քանի պահանջ՝

✓ Ամենակարևոր պահանջը սահիկահանդեսի՝ թեմայի ուսումնական նպատակներին ու խնդիրներին համապատասխանելն է:

✓ Սահիկահանդեսում պետք է պահպանվի մատչելիության սկզբունքը, պետք է հարմարեցվի աշակերտների անհատական, տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին:

✓ Առանց սխալների բովանդակության առկայություն, մտքի պահպանված հաջորդականություն:

✓ Սահիկահանդեսում չպետք է գրված շատ տեքստ լինի, միայն մեկ կամ երկու նախադասություն՝ մտքի հստակությամբ:

✓ Բառերը, օգտագործվող նկարները չափերով պետք է փոքր չլինեն, այսինքն տեսանելի լինեն բոլորին, նյութը պետք է լավ տեսնեն նույնիսկ վերջին շարքում նստածները:

✓ Նկարները պետք է համապատասխան լինեն բովանդակությանը:

✓ Նույն թեմային առնչվող նյութերը պետք է դրվեն մեկ սահիկում:

✓ Սահիկահանդեսի ձևավորումը պետք է համապատասխանի գեղագիտական պահանջներին:

Տեսանյութեր, ֆիլմեր: Սրանք բխում են զննականության դեմոնստրացիա մեթոդից, որի էությունը նույնպես ցուցադրումն է, բայց այս դեպքում ցուցադրմանը ուղեկցում է շարժումը: Այն օգնում է աշակերտին ընկալել ինֆորմացիան, տեղեկույթը մի քանի զգայարաններով, որոնք աշխատեցնելով՝ աշակերտը կգտնի գլխավոր, էական խնդիրը, որը մինչ դիտումը տվել է ուսուցիչը: Տեսաֆիլմերի, տեսաերիզների ցուցադրմանը ներկայացվում են մեթոդական մի քանի պահանջներ՝

• ցուցադրության նյութը պետք է համապատասխանի ուսուցանվող թեմայի, առաջադրանքների բովանդակությանը,

- ցուցադրությունից առաջ ուսուցիչը պետք է ներկայացնի ճանաչողական այնպիսի խնդիր, որը լուծվելու է դիտման ընթացքում,
- ցուցադրությունը պետք է երկար չտևի, քանի որ աշակերտները կձանձրանան, նրանց ուշադրությունը կշեղվի,
- ուսուցիչը նախապես պետք է սովորողներին ծանոթացնի ցուցադրվող նյութին
- ցուցադրության վերջում սովորողները պետք է կարողանան պատասխանել նյութին վերաբերող հարցերին և անեն ինքնուրույն եզրակացություններ,[1, էջ 92]
- ուսուցիչը նախօրոք պետք է ուսումնասիրի տվյալ նյութը, պատրաստվի աշակերտների կողմից հարցեր ստանալուն և հարցեր առաջադրելու:

Բնական օբյեկտներ: Օրինակ՝ կենդանիներ, թռչուններ բերելով դասարան՝ ուսուցիչը բացի ուսումնական, դիդակտիկ նպատակներից ունենում է նաև այլ նպատակներ, ներգործում է աշակերտների հոգեկան, հուզական աշխարհի վրա, զգացմունքների և հույզերի վրա, որի միջոցով լուծում է նաև դաստիարակչական խնդիրներ: Տարրական դասարաններում մայրենիի դասերին **մակետներ** կարելի է պատրաստել հեքիաթների և պատմվածքների ուսումնասիրման ժամանակ: Կարելի է ստեղծել պատմվածքների հերոսների, կենդանիների փոքրիկ տարբերակները, դրանք հավաքել դասարանի մի անկյունում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԶՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ՝ ԸՍՏ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

1.1 Հարցաթերթիկի վերլուծություն

Դիդակտիկ նյութերի գործածումը մայրենիի դասին դիտարկելու և վերջինիս՝ ուսումնասիրման արդյունավետության բարձրացման գործոն լինելու հնարավորությունները պարզելու համար կատարել ենք մի քանի աշխատանք:

Կազմել ենք հարցաթերթիկ, որի նպատակն էր պարզել, թե ժամանակակից տարրական դպրոցում ինչ դիդակտիկ նյութեր են պատրաստում և օգտագործում դասվարները, և ինչ են կարծում՝ որքանով են դիդակտիկ պարագաները նպաստում մայրենիի դասի արդյունավետությանը: Հարցաթերթիկը բաղկացած էր 5 հարցից, որից երկուսը փակ, երեքը բաց: Հարցմանը մասնակցել են Հայաստանի տարբեր մարզերից շուրջ 20 դասվար: Ներկայացնենք հարցման արդյունքները՝

1.Հաճա՞խ եք օգտագործում դիտազննական պարագաներ մայրենիի դասերին:



Գծապատկեր 2

Հարցվածներից 8-ը նշել են, որ դիդակտիկ նյութեր գործածում են ժամանակ առ ժամանակ, 12-ը պնդեց, որ հաճախակի է գործածում, «ոչ» պատասխան չգրանցվեց:

2. Դու՞ք եք պատրաստում Ձեր կողմից գործածվող դիդակտիկ նյութերը:



Գծապատկեր 3

Արդյունքից պարզ է դառնում, որ դասվարները (15 հոգի) նախընտրում են սեփական ուժերով ստեղծել օգտագործվող պարագաները, ոմանք էլ (5)՝ նայած թե ինչ դիդակտիկ նյութ են նախատեսել:

3. Ո՞ր դասարանում եք հիմնականում կիրառում դիդակտիկ նյութեր:



Գծապատկեր 4

Այս հարցը պահանջում էր նաև հիմնավորում, որը դասվարները լրացրել էին տալով այսպիսի մեկնաբանություններ՝ «Առավել հաճախ դիդակտիկ նյութերի կիրառման անհրաժեշտություն է լինում առաջին և երկրորդ դասարանում, երրորդում նվազում է, իսկ չորրորդ դասարանում կիրառվում է հազվադեպ», «Բոլոր դասարաններում էլ պետք է կիրառել դիդակտիկ նյութեր, քանի որ ցանկացած տարիքային խմբին էլ հետաքրքիր ու չձանձրացնող է զննական պարագաներով համեմված դասը», «Նրանց մտածողությունը պատկերավոր է, անհրաժեշտ է ուսումնասիրվող բոլոր երևույթները ցույց տալ առարկայական ձևով»:

4. Ի՞նչ դիդակտիկ պարագաներ եք օգտագործում մայրենիի դասերին:

Այս հարցի միջոցով նպատակ ունեինք պարզելու, թե որն է մայրենիի դասին ամենից շատ օգտագործվող դիդակտիկ նյութը: Հարցման մասնակիցները նշել էին պաստառներն (14 հոգի) ու նկարները (9 հոգի), իհարկե դա մենք բացատրում ենք այն հանգամանքով, որ պաստառների տեսակները շատ են և հետևաբար կարելի է դրանք կիրառել տարբեր նպատակներով, նույն սկզբունքը գործում է նաև նկարների դեպքում, որոնք կարող ենք օգտագործել թե՛ բնագրերի ուսումնասիրման, թե՛ առանձին ուսումնական խնդիրներ լուծելիս, թե՛ լեզվական նյութի ուսումնասիրման ժամանակ: Դասվարներից շատերը նշել էին նաև առաջին դասարանում կիրառվող

տառադարանը, լոտոն, դոմինոն, հավաքապաստառը: Չորս ուսուցիչ կարևորել և նշել էին քարտերի բազմագործառույթ լինելը: Այն կարելի է կիրառել տարրական դպրոցի բոլոր դասարաններում՝ համապատասխանեցնելով սովորողների տարիքային առաձնահատկություններին և ուսումնական խնդիրներին:

Հարց 5: Դիտազննական պարագաների, դիդակտիկ նյութերի գործածումը ինչպե՞ս է բարձրացնում մայրենիի դասի արդյունավետությունը:

Ուսումնասիրելով և ընդհանրացնելով ուսուցիչների մեկնաբանությունները՝ ներկայացնենք դրանք ամփոփ ձևով:

- ✓ Հեշտացնում է դասանյութի ընկալումն ու յուրացումը:
- ✓ Ուսումնական գործընթացը դառնում է հետաքրքիր. դասն անցնում է առավել աշխույժ, ակտիվ աշխատանքային մթնոլորտում:
- ✓ Զարգացնում է ինքնուրույն մտածելու կարողությունը, բանավոր խոսքը:
- ✓ Նպաստում է ուղղագրական կանոնների հեշտ մտապահմանը:
- ✓ Նպաստում է սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:
- ✓ Լուծում է նաև դաստիարակչական խնդիրներ:

1.2 Դիդակտիկ նյութերի կիրառման մեր փորձից

Փորձեցինք դիդակտիկ նյութերի արդյունավետությունը տեսնել՝ դասեր վարելով, որոնց ընթացքում գործածեցինք դիդակտիկ նյութեր: Ստորև ներկայացնում ենք երրորդ դասարանում մեր վարած դասի պլանը :

Առարկա՝ մայրենի:

Դասի տեսակը՝ համակցված:

Դասի թեման ՝ նախորդ դասը «Տերևը»՝ նոր դասը՝ «Տերևաթափ»,

Դասի նպատակը՝ բնագրի արտահայտիչ արտասանության զարգացում, կարդացած բանատեղծության և սեփական կենսափորձի միջև կապերի ամրապնդում, նկարագրական խոսքի զարգացում:

Դասի վերջնարդյունքները՝

- Կկարողանան անգիր արտասանել բանաստեղծությունը,
- Կկարողանան մեկնաբանել պատկերավոր արտահայտությունները, կատարել համեմատական աշխատանք,
- Կկարողանան գրել աշունը նկարագրող տեքստ:

Դասին կիրառվող մեթոդները՝ զրույց, Վենի դիագրամ, քառաբաժան , «Զրույց հեղինակի հետ» մեթոդական հնար:

Դասին օգտագործվող զննական պարագաներ ՝ իլուստրացիա /նկարներ, աղյուսակ, թղթեր/, տեսասահիկ:

Աշակերտները արտասանեցին բնաստեղծությունը, ապա գրատախտակին գրած աղյուսակի մեջ կատարում ինքնագնահատում.

Վարժ կամ սահուն	Արտահայտիչ	Վարժ, սահուն, արտահայտիչ

Քննարկեցինք արդյունքներն ու գրատախտակին գծեցինք Վենի դիագրամ՝ համեմատելու քաղաքի և գյուղի աշունը /Ինչո՞վ են նման, ինչո՞վ տարբեր/: Ցուցադրեցինք նկարներ, պաստառներ, որպեսզի ակնառու լինի աշնան ամբողջական պատկերը: Հարց ու պատասխանի միջոցով աշակերտները բնութագրեցին աշնան ամիսները, ներկայացրին աշնանը բնորոշ փոփոխությունները: Տեսասահիկով տեղեկություն հաղորդեցինք տերևի տեսակների ու ձևերի մասին: Ընթերցեցին «Տերևաթափ» բնագիրը և «Զրույց հեղինակի հետ» մեթոդական հնարի օգնության կատարեցինք բառաբացատրական աշխատանք:

Այնուհետև կատարեցինք հետևյալ առաջադրանքը. *«Ես ասեմ, դուք պատկերացրեք»*

- Պատկերացրե՛ք, որ հանդիպել եք մի մարդու, որը չգիտի, թե ինչ է աշունը: Այնպես նկարագրե՛ք ու բացատրե՛ք, որ հասկանա:
- Յուրաքանչյուրին բաժանել թղթեր, որոնց վրա երկու- երեք նախադասությամբ կնկարագրեն աշունը:
- Տերևաթափ բառը լսելիս գրել մտածածը, հիշածը, պատկերացրածը:

Կատարեցինք անդրադարձ և ամփոփեցինք աշխատանքները:

Վերլուծելով դասի արդյունքները, կարող ենք ասել, որ փոխգործուն մեթոդները շատ օգնեցին, որպեսզի դասն անցնի հետաքրքիր ու բովանդակային, ևս մեկ անգամ ապացուցելով փոխգործուն մեթոդական հնարների և զննականության անխախտ կապը: Դիտելով նկարները՝ աշակերտները կարողացան կառուցել բովանդակային նկարագրական խոսք՝ կիրառելով ածականներ:

Մենք գտնում ենք, որ դիդակտիկ նյութեր կարելի է նաև օգտագործել գրավոր խոսքի զարգացման դասերի ժամանակ և դրանով նպաստել սովորողների գրավոր տեքստ կառուցելու կարողության զարգացմանը, ձևավորմանը: Այդ նպատակով մենք վերոնշյալ դպրոցի չորրորդ դասարանում հանձնարարեցինք շարադրություն՝ կիրառելով համապատասխան մեթոդական շղթա, և նույն դասարանում մեկ այլ

թեմայով կրկին շարադրություն, բայց այս անգամ՝ դիդակտիկ նյութերով զինված: Ներկայացնենք քննարկվող դասերի ընթացքն ու վերջնարդյունքները:

Դաս առաջին: Դասի նպատակներն էին՝ աշակերտների գրավոր և բանավոր խոսքի, ինքնարտահայտման կարողության զարգացումը, ընտանիքի անփոխարինելի դերի գիտակցումն ու արժևորումը: Կատարեցինք նախապատրաստական աշխատանք. վերհիշեցինք շարադրության կառուցվածքը, տեքստի բաղադրամասերի հաջորդականությունը: Աշակերտներին ուղղեցինք հետևյալ հարցերը, որոնց պատասխանելով կկարողանային հեշտությամբ շարադրել իրենց մտքերը: Օրինակ՝

- Ինչիսի՞ն է ձեր ընտանիքը,
- ի՞նչ բնավորության գծեր ունեն ծնողներդ, որ քեզ շատ է դուր գալիս,
- պատմե՞լ է մայրիկդ, թե ինչպիսին էիր դու, երբ նոր էիր լույս աշխարհ եկել, ինչպե՞ս էր նա հոգ տանում քո մասին,
- ե՞րբ ես առաջին անգամ արտասանել «Հայրիկ» բառը, իսկ ի՞նչ է նա սովորեցրել քեզ,
- մայրիկի պատրաստած ո՞ր ուտեստներն ես սիրում ամենից շատ, արդյո՞ք օգնում ես ծնողներիդ տնային գործերում, իսկ նա՝ քեզ:

Զրույցից հետո աշակերտների հետ որոշեցինք հենակետային բառերն ու բառակապակցությունները՝ ընտանիք, գեղեցիկ, քնքուշ, հոգատար մայրիկ, սիրել ընտանիքը, պատմել օրվա ընթացքից, նստել սեղանի շուրջ և այլն: Անդրադարձ կատարեցինք ուղղագրական արժեք ունեցող և բացատրություն պահանջող բառերին, որից հետո աշակերտները գրեցին շարադրությունը: Կատարեցին ինքնաստուգում և հանձնեցին տետրերը:

Դաս երկրորդ: Այս գրավոր աշխատանքի նպատակներն էին՝ բանավոր և գրավոր կապակցված խոսքի, ստեղծագործական կարողությունների զարգացում, ճանաչողական գիտելիքների հաղորդում, հայրենասիրության սերմանում: Դասի խնդիրներն էին՝ դիտելով «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմից մի հատված՝ համեմատել «Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ» դասանյութի հետ, բնութագրել Սասունցի

Դավթին՝ որպես հայ ժողովրդին բնորոշ հատկանիշների կրող, մտքերը տրամաբանորեն, կապակցված արտահայտել բանավոր, ապա շարադրել գրավոր:

Վարեցինք նախապատրաստական զրույց հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:
- Որտեղի՞ց է հայրենիքը սկսվում ձեզ համար:
- Ինչպիսի՞ն է հայը, փորձեք բնութագրել:
- Փորձե՛ք գուշակել, թե ու՞մ մասին է խոսքը. «Այդ դյուցազնը մեր պայքարի, հերոսության խորհրդանիշն է, մենք նրան ծանոթ ենք դեռևս «Այբբենարանից» մեր բոլոր դասագրքերում նրա մասին գրված է»:
- Նրա կատարած ի՞նչ սխրանքներ կարող եք հիշել:

Աշակերտներից մի քանիսը կռահեցին, որ խոսքը Սասունցի Դավթի մասին է և, նրան տվեցին քաջ, ուժեղ, համարձակ որակները:

Քննարկումից հետո դիտեցինք «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմից մի հատված:

Պահանջեցինք կապ ստեղծել մուլտֆիլմի և «Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ» դասանյութի միջև և պատասխանել հետևյալ հարցին.

• Սասունցի Դավթի ո՞ր հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին:

Աշակերտները պատասխանեցին՝ մարդասիրություն, արդարամտություն, հայրենասիրություն, խիզախություն, համարձակություն, հոգատարություն, ազնվություն, սակավապետություն:

Այնուհետև աշակերտների հետ որոշեցինք «Հայրենիք» թեմայի վերաբերյալ հենակետային, բանալի բառեր՝ հայրենիք, հայ ժողովուրդ, հազարամյա պատմություն, արդարամտություն, ազգ, հայրենասիրություն, քաջ զինվոր, խիզախություն, համարձակություն, հոգատարություն, ազնվություն, ազգի պահապան, հայկական մշակույթ: Առաջարկեցինք վերնագրեր և աշակերտները ընտրեցին «Իմ հայրենիքը» թեման ու գրեցին շարադրությունը:

Ամփոփում: Ստուգելիս կարևորել ենք յուրաքանչյուր շարադրության բովանդակության համապատասխանությունը վերնագրին, մտքերի տրամաբանական հաջորդականության պահպանումը: Մենք, գործածելով

դեմոնստրացիայի մեթոդը, ցուցադրեցինք մուլտֆիլմը, որը նպաստեց աշակերտների ակտիվության բարձրացմանը, մեծացավ դասին առավելագույնս ներգրավվելու ցանկությունը: Այս տեսանյութը որպես դիդակտիկ նյութ, գործածելը նպատակ ուներ նաև աշակերտների մեջ հայրենասիրության սերմանումը, հայրենիքի կարևորումն ու արժևորումը: Այսինքն՝ մենք օգտվեցինք մուլտֆիլմի դաստիարակչական գործառույթից:

Շարադրությունները կառուցված էին պատմողական, նկարագրական, դատողական նախադասություններով. աշակերտները գրել էին այն, ինչ տեսել էին դիտման ընթացքում: Այս երկու շարադրության արդյունքները գրանցելու համար մենք ստեղծել էինք գնահատման սանդղակ, որն ուներ հետևյալ տեսքը՝

Չափանիշներ	***Գնահատման միավոր***
1.Նախագծի կազմում	1 միավոր
2.Վերնագրին համապատասխան բովանդակության շարադրանք	3 միավոր
3.Գեղարվեստական բառապաշարի կիրառում	1 միավոր
4. Խոսքի ոճական արտահայտչամիջոցների կիրառում	2 միավոր
5.Նշված ծավալի պահպանում	1 միավոր
6. Ուղղագրական և կետադրական գրագիտություն	1 միավոր
7. Գեղագրություն	1 միավոր

Գծապատկեր 5

Կարևորելով հետևյալ չափանիշները՝ մենք ուսումնասիրեցինք գրավոր աշխատանքները և եկանք կրկին այն համոզման, որ դասին թեկուզ մեկ դիդակտիկ նյութի գործածումը փոխում է թե՛ նյութի ընկալման արագությունը, հիշողության մեջ մտապահելու գործընթացը, և թե՛ այս դեպքում գրավոր աշխատանքի որակի բարձրացման մակարդակը:

Առաջին շարադրության դեպքում թեման առօրեական էր. աշակերտը գրել է այն, ինչը տեսել է, հիմնական խոսքը նկարագրական է:

Երկրորդ դեպքում ավելի բարդ թեմա էր ընտրված, քանի որ աշակերտները բացի իրենց տեսածը, մտապահածը վերարտադրելուց, պետք է իրենց մտքերը շարադրեին նաև զգացածի մասին, չէ՞ որ հայրենիքը պետք է զգալ: Մենք համոզվեցինք երկրորդ շարադրության ժամանակ կիրառվող դիդակտիկ նյութի արդյունավետությունը. շատերը իրենց շարադրության մեջ համեմատություն էին կատարել, տեսանյութի բովանդակությունն էին բացահայտել, գրել էին դատողական, գնահատող խոսք: Այսպիսով՝ մեր այս աշխատանքով ևս մեկ անգամ հաստատեցինք այն համոզմունքը, որ դիդակտիկ նյութ կարելի է գործածել բոլոր դասարաններում՝ միայն թե հաշվի առնելով մի շարք ֆիզիոլոգիական, հոգեբանական գործոններ, պետք է փոփոխել դրանց բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, անցկացնելով հարցումներ Հայաստանի տարբեր դպրոցների դասվարների հետ՝ մենք պարզեցինք այն հիմնական դիդակտիկ նյութերի ցանկը, որոնք ժամանակակից դպրոցում ամենից հաճախ են գործածվում, բացահայտեցինք դրանց կիրառման առանձնահատկությունները: Արդյունքում պարզվեց, որ ժամանակակից դասվարները հաճախ օգտագործում են նկարներ, պաստառեր, առանձին դասարաններում նաև լոտոներ, շարժական պատկերներ, տառադարան: Տեխնիկապես հագեցած դպրոցներում մասամբ նաև կիրառում են սահիկահանդեսներ, տեսանյութեր:

• Աշխատանքի ընթացքում պլանավորել, վարել և վերլուծել ենք մի քանի դաս՝ բացահայտելով դիդակտիկ նյութերի արդյունավետության միջոց լինելու հանգամանքը: Արդյունքները վերլուծելով և դասի ընթացքը դիտելով պարզ դարձավ, որ դասի ընթացքում դրանք նպաստեցին աշակերտների ակտիվությանը, բարձրացավ դասին առավելագույնս մասնակցելու ցանկությունը, ապահովեց աշխատանքային բարձր մթնոլորտ, իսկ արդեն դասի արդյունքները վերլուծելիս, աշակերտների գրած պատասխանները մեզ հուշեցին, որ նրանք ծանոթացան այն տեղեկություններին, սովորեցին թեմայի շրջանակներում այն հասկացությունները, որոնք օգտագործվում էր դիդակտիկ նյութերը ցուցադրելիս, զարգացավ նաև բառապաշարը. աշակերտների ակտիվ բառապաշար մտան տվյալ դասին սովորած բառերն ու բառակապակցությունները, որոնք հետո գործածեցին նախադասությունների մեջ: Նույնպիսի արդյունք մենք ստացանք, երբ նույն սկզբունքով վարեցինք նաև գրավոր աշխատանքի (շարադրություն) դաս, որտեղ կրկին մեր կիրառած դիդակտիկ նյութերի շնորհիվ արդյունքն ակնհայտ էր. աշակերտները այս անգամ իրենց աշխատանքը կառուցել էին դատողական ու գնահատող խոսքով: Այս աշխատանքները կատարելով՝ մենք գտնում ենք, որ իսկապես յուրաքանչյուր դիդակտիկ նյութ ունի նպատակ, լուծում է ուսումնադաստիարակչական խնդիր և հանդիսանում է դասի արդյունավետության պայման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ն. Զ,. «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Արտագերս, Ե., 2016, 224 էջ

2. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Ե., 2015, 316 էջ

3. Թաթոյան Լ., Դիդակտիկ նյութերի և պարագաների դերը, դրանց պատրաստման և կիրառման խնդիրներն ու առանձնահատկությունը, «Նախաշավիղ»,հ.2, Ե., Կրթության ազգային ինստիտուտ, 2012, Կոմենսկի Յ. Ա.,

4.Մեծ դիդակտիկա, Հայպետմանկհրատ, Ե., 1962, 356 էջ

5. Սարգսյան Վ., «Այբբենարան», Եր., Մանմար, 2013, 156 էջ

6. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Եր., Մակմիլան-Արմենիա, 2009, 160 էջ:

7. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., «Մայրենի 4», Եր., ՄԱՆՄԱՐ, 2010, 176 էջ: